

## ՀՐԱԶԻԿ ՂԱԶԱՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ (1940-2019)



80 տարին չբոլորած՝ կյանքից հեռացավ անվանի հայագետ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ԵՊՀ փիլիսոփայության պատմության, տեսության ու տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր, ԵՊՀ փիլիսոփայության, սոցիոլոգիայի ու հոգեբանության ֆակուլտետի նախկին դեկան, «Բանբեր Երևանի համալսարանի» գիտական հանդեսի գլխավոր խմբագիր, ՀՀ գրողների միության անդամ Հրաչիկ Ղազարի Միրզոյանը:

Հր. Միրզոյանը ծնվել է 1940 թ. մարտի 13-ին ՀՍՍՀ Նոյեմբեյանի շրջանի Դոստուլու (ներկայումս՝ Տավուշի մարզի Բարեկամավան) գյուղում, սովորել տեղի յոթնամյա դպրոցում, այնուհետև՝ Նոր Բայազետի (այժմ՝ Գավառ) մանկավարժական ուսումնարանում, որն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ: 1963 թ. գերազանցությամբ ավարտել է համալսարանը և ընդունվել ԵՊՀ ասպիրանտուրա՝ հայ փիլիսոփայության պատմություն մասնագիտացմամբ: 1967 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ 1971 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1984 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1987 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, իսկ 1989 թ. ընտրվել է ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի վարիչ, որը ղեկավարել է մինչև 2000 թ.: 1998 թ. նշանակվել է ԵՊՀ փիլիսոփայության, սոցիոլոգիայի ու հոգեբանության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, իսկ 2000 թ. ընտրվել այդ նույն ֆակուլտետի դեկան և պաշտոնավարել մինչև 2009 թ.: 1992 թ. մինչև իր մահը «Բանբեր Երևանի համալսարանի» գիտական հանդեսի գլխավոր խմբագիրն էր:

Պրոֆ. Միրզոյանը այն գիտնականներից է, որոնք հաճախ «մոռանալով» անձնական կյանքը, անմնացորդ նվիրվում են գիտությանը, և գիտական գործունեության մեջ են առավելապես տեսնում իրենց Ես-ի ինքնահաստատման ու իր ստեղծագործական կարողությունների դրսևորման ճանապարհը: Անվանի գիտնականը նշանակալից ավանդ է ներդրել հայ փիլիսոփայության ու մշակույթի պատմության, աղբյու-

րագիտության ու բնագրագիտության ոլորտների զարգացման գործում: Իբրև հայ փիլիսոփայության պատմաբան՝ անուրանալի է նրա ավանդը հատկապես հայ մշակույթի պատմության մեջ թեև կարևոր, բայց փաստորեն անտեսված կամ սխալ գնահատված ժամանակահատվածներից մեկի՝ XVII դարի հայ փիլիսոփայության լուսաբանման ու գնահատման գործում: Իր «Միմեոն Ջուղայեցի» (Երևան, 1971), «XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն» (Երևան, 1983), «Հովհաննես Սրբուզ Ջուղայեցի» (Երևան, 2001) մենագրություններում առաջին անգամ հանգամանորեն վերլուծել է XVII դարի հայ փիլիսոփայության ձևավորման պատմամշակութային նախադրյալները, դարաշրջանի հայ փիլիսոփայության մեջ քննարկված հարցերն ու դրանց լուծումները, միարարակական-հակամիարարակական պայքարի տեսական-գաղափարական հիմքերը, դարաշրջանի նշանավոր հասարակական-կրոնական գործիչներ ու փիլիսոփաներ Միմեոն Ջուղայեցու, Ստեփանոս Լեհացու, Հովհաննես Սրբուզ Ջուղայեցու, Ստեփանոս Դաշտեցու, Ղուկաս Վանանդեցու և այլոց փիլիսոփայական հայացքներն ու գիտամշակութային գործունեությունը: Իր առաջին մենագրությամբ հեղինակը կարողացավ սասանել հայագիտության ասպարեզում վաղուց հաստատված այն տեսակետը, որ, իբր, XV դ. երկրորդ կեսից ընդհանրապես հայ մշակույթի, ի մասնավորի հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ սկսված անկումը տևել է մինչև XVIII դ. երկրորդ կեսը: Անդրանիկ մենագրությունից հետո տեսնելով, որ դեռ շատ բան կա անելու XVII դարի հայոց փիլիսոփայական ու մշակութային արժեքները վեր հանելու իմաստով, Հ. Միրզոյանն իրեն բնորոշ համատությամբ ու բարեխղճությամբ շարունակեց գիտական որոնումներն այդ ուղղությամբ, և որպես իր շուրջ քսանամյա տքնաջան աշխատանքի արդյունք՝ գիտական հանրության դատին ներկայացրեց «XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն» արժեքավոր մենագրությունը, որը մեկ տարի անց ներկայացնելով որպես դոկտորական ատենախոսություն՝ հաջողությամբ պաշտպանեց և արժանացավ փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի: Դրանից հետո էլ, շարունակելով XVII դարի հայ մշակութային ու փիլիսոփայական մտքի ուսումնասիրությունը, նա հրատարակեց «Հովհաննես Սրբուզ Ջուղայեցի» մենագրությունը, որը արժեքավոր է հատկապես այն բանով, որ դրանում հեղինակը առաջադրում և կիրառում է մեթոդաբանական մի շարք դրույթներ, որոնք հնարավորություն են տալիս վերանայելու և նորովի գնահատելու հայագիտության մեջ արմատավորված որոշ տեսակետներ: Օրինակ, նա հայոց պատմության XVII-XVIII դարերի ժամանակահատվածը անվանում է ջուղայական, ինչը մեթոդաբանական կարևոր նշանակություն ունի թե՛ հայոց պատմության և թե՛ մշակույթի զարգացման ընթացքի տրամաբանությունը հասկանալու համար: Այսպիսի մեթոդաբանական դիրքորոշումը հնարավորություն է տալիս ճիշտ բացատրելու ինչպես հայ ազգային-ազատագրական շարժումների, այն-

պես էլ XVIII դարի երկրորդ կեսին հեռավոր Հնդկաստանում հայ լուսավորական փիլիսոփայության առաջացման հասարակական-քաղաքական պայմաններն ու տեսական-գաղափարական ակունքները: Համոզված լինելով, որ հայոց մշակույթի և փիլիսոփայության զարգացումը, իր ժամանակավոր անկումներով հանդերձ, եղել է անընդհատ ու միասնական գործընթաց, պրոֆ. Միրզոյանը ձգտում էր բացահայտել հենց այդ անընդհատականությունը, որը հատկապես մեր օրերում ունի ոչ միայն գիտական ու մշակութային, այլև քաղաքական նշանակություն:

Նկատի ունենալով XVII դարի հայ փիլիսոփայության պատմությունը նվիրված նրա հետազոտությունները վստահաբար կարող ենք ասել, որ պրոֆ. Միրզոյանի գիտական աշխատությունների շնորհիվ այսօր մենք ավելի ամբողջական ու խորը պատկերացում ունենք XVII դարի հայ գիտամշակութային կյանքի և հատկապես հայ փիլիսոփայության մասին: Կյանքի վերջին քսան տարիներին նրա գիտական հետաքրքրությունների կենտրոնում հայտնվեց հայ մեծագույն բանաստեղծ և մտածող Գրիգոր Նարեկացին: Վերծանելով բանաստեղծի գլուխգործոց «Մատենանոց գրքերգութեան» ստեղծագործության մեջ առկա մի շարք ծածկագրություններ՝ պրոֆ. Միրզոյանը ի հայտ բերեց նրա կյանքին ու գործունեությանը վերաբերող նոր փաստեր ու տեղեկություններ, որոնք հնարավորություն տվեցին նորովի գնահատելու ինչպես նրա անցած ստեղծագործական ուղին, այնպես էլ «Մատյանի» ստեղծման շարժառիթներն ու նպատակները: Գիտական հասարակայնությունն առանձնապես բարձր է գնահատել Նարեկացու բառաստեղծական արվեստին նվիրված նրա հետազոտությունները, որոնք լույս են տեսել նաև առանձին գրքով («Գրիգոր Նարեկացու բառաստեղծական արվեստը», Երևան, 2006) և 2008 թ. արժանացել ՀՀ Թեքեյան մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» երկամյա մրցանակին: «Նարեկացիագիտական հետազոտություններ» հանրագումարային աշխատության մեջ (Երևան, 2010) պրոֆ. Միրզոյանին հաջողվել է ուրույն, որոշ դեպքերում հիմնավոր, երբեմն էլ վիճահարույց տեսակետներ առաջադրել Նարեկացու գրական ժառանգության հետ կապված առանձին հարցերի վերաբերյալ:

Պրոֆ. Միրզոյանի գիտական գործունեության առանձին էջ են կազմում աղբյուրագիտական հետազոտությունները և բնագրերի հրատարակումը: Նրանք, ովքեր առնչվել են գիտական գործունեության այս ոլորտին, շատ լավ գիտեն, թե ինչ տիտանական ջանքերի շնորհիվ է լույս աշխարհ գալիս մի որևէ բնագրի քննական տեքստը: Իսկ առանց այդպիսի աշխատանքի հնարավոր չէ ո՛չ հայագիտության հետազոտության զարգացումը, ո՛չ էլ մեր մշակութային անձնագրի պատրաստումը: Հետաքրքիր է նշել, որ պրոֆ. Միրզոյանը հրատարակության է պատրաստել ոչ միայն շրջանառության մեջ չգտնվող բնագրեր (օրինակ, Ստեփանոս Դաշտեցու «Զրույց բանավեճերը» (տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1995, թիվ 3, 1997, թիվ 3, 2009, թիվ 3), այլև մասնագիտական գրականության մեջ անանուն կամ հեղինակային պատկանելության

վիճարկելիությամբ բնագրեր, ինչը նրան ստիպել է անցկացնել լրացուցիչ հետազոտություններ և ի վերջո հայտնաբերել բնագրի իսկական հեղինակին: Դրանցից մեկը անանուն համարվող «Լուծմունք «Սահմանաց գրոց»» երկն էր, որի հեղինակը պրոֆ. Միրզոյանի համոզմամբ Հովհաննես Սարկավազ Իմաստասերն է («Յովհաննես Սարկավազ Իմաստասեր, Լուծմունք «Սահմանաց գրոց»», աշխատասիրությամբ Հ. Ղ. Միրզոյանի և Ա. Մաղոյանի, Երևան, 2004): Իսկ մյուսը «Համառատիւք բան խրատու» բարոյափիլիսոփայական մեծարժեք աշխատությունն է, որը, ըստ պրոֆ. Միրզոյանի ապացույցների, պատկանում է Գրիգոր Նարեկացու գրչին («Համառատիւք բան խրատու», «Մատենագիրք հայոց», ԺԲ հատոր, Անթիլիաս, Լիբանան, 2008): Նա Թ. Դիլանյանի հետ կազմել և հրատարակել է նաև «Էֆիմերտե» աշխատությունը (Երևան, 1992):

Պրոֆ. Միրզոյանը թարգմանել է նաև մասնագիտական գրքեր, որոնցից առանձնապես նշելի են Թ. Դիլանյանի հետ թարգմանած «Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ» (Երևան, 1979) մեծածավալ ուսումնական ձեռնարկը, Միքայել Նալբանդյանին (Երևան, 1987) և Սոկրատեսին (Երևան, 1989) նվիրված մենագրությունները:

Սկսած 1992 թ. նա «Բանբեր Երևանի համալսարանի» գիտական հանդեսի գլխավոր խմբագիրն էր և մեծ ջանքեր է ներդրել ինչպես դրականոնվող հրատարակման, այնպես էլ գիտական մակարդակի բարձրացման համար: Իբրև խմբագիր սկզբունքային էր, հետևողական, անզիջող, ինչը երբեմն հարուցում էր գործընկերների դժգոհությունը: Լինելով ԵՊՀ փիլիսոփայության, սոցիոլոգիայի ու հոգեբանության ֆակուլտետի ղեկան և գիտական աստիճաններ շնորհող 013 մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալ, հետո՝ նախագահ, նա մեծ ավանդ ունեցավ այդ գիտությունների զարգացման ու երիտասարդ գիտնականների պատրաստման գործում: Միայն վերջին քսան տարում նրա անմիջական ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել են դոկտորական և թեկնածուական բազմաթիվ ատենախոսություններ:

Գիտախմբագրական գործունեությանը զուգահեռ՝ պրոֆ. Միրզոյանը Երևանի պետական համալսարանում դասավանդում էր «Փիլիսոփայության պատմություն», «Նոր շրջանի փիլիսոփայության պատմություն» և «Հայ փիլիսոփայության պատմություն» առարկաները: Իսկ 1994-1997 թթ. Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արքեպս. Մանուկյանի հրավերով նա համալսարանի ղեկավարության կողմից գործուղվեց Երուսաղեմ՝ դասավանդելու Ալեք և Մարի Մանուկյան ժառանգավորաց վարժարանում և ընծայարանում: Իսկ 1997-2003 թթ. Ն. Ս. Օ. Տ. Ս. Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի հրավերով համատեղության կարգով դասավանդել է նաև Մայր աթոռ ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում:

Պրոֆ. Միրզոյանն անաչառ էր որպես գիտնական և հայրենասեր որպես հայագետ: Խորհրդային տարիներին, երբ հայագետները, ի տարբերություն հարևան հանրապետությունների իրենց գործընկերների, գրեթե իրավունք չունեին վիճահարույց հարցերի քննարկման ժա-

մանակ «նեղացնել» ինտերնացիոնալիստական փետուրներով զարդարված ազգայնամոլ հետազոտողներին, հատկապես մշակութային խաչագողերին, պրոֆ. Միրզոյանը համարձակություն ունեցավ տարբեր առիթներով հրապարակավ քննադատելու նրանց հակահայկական սին տեսակետները: Պատմության կեղծարարների դեմ նրա պայքարը շարունակական էր, ինչի վկայությունը Ն. Գոնչարի հետ հրատարակած «Почему суд по факту Геноцида армян Турция призывает доверять историкам» (Երևան, 2012) աշխատությունն էր:

Առհասարակ, տարբեր պետություններում և քաղաքներում մասնակցելով միջազգային և այլ կարգի գիտաժողովների, նա կարողացել է պատշաճ մակարդակով գիտական հանրությանը ներկայացնել հայ փիլիսոփայության և մշակույթի արժեքները՝ բարձր պահելով հայագիտության պատիվը: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել 1980 թ. Դավիթ Անհադթի 1500-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի կազմակերպմանը:

Միրզոյանը ինչ-որ առումով հրապարակախոս գիտնական էր, իր երկրի քաղաքացին, որն անտարբեր չէր հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ, փորձում էր օրախնդիր հարցերի վերաբերյալ հրապարակավ ներկայացնել իր պատկերացումներն ու տեսակետները: Հրապարակախոսական հոդվածներով բազմիցս հանդես գալով համամիութենական և հանրապետական մամուլում՝ նա քննարկման առարկա է դարձրել բարոյական, ազգային, մշակութային բնույթի կենսահույզ հարցեր, որոնք լայն արձագանք են ստացել ընթերցողների շրջանում: Այդ հոդվածներում երևում է երկրի ճակատագրով, ժողովրդի հոգսերով ապրող քաղաքացու մտահոգությունը: Պատահական չէ, որ Ղարաբաղյան շարժման տարիներին հայրենասեր գիտնականը պրոֆ. Ս. Ջոյանի հետ մեկտեղ կազմեց և հրապարակեց «Глазами независимых наблюдателей. Нагорный Карабах и вокруг него» (Երևան, 1991) օտարազգի հեղինակների հոդվածների ժողովածուն:

Պրոֆ. Միրզոյանի կյանքի մեծագույն մասը անցել է Երևանի պետական համալսարանում, որտեղ նա ձևավորվել ու կայացել է թե՛ որպես գիտնական, թե՛ մարդ ու թե՛ քաղաքացի: XX դարի 60-ական թվականներից մինչև իր մահը նա գործունե մասնակցություն է ցուցաբերել համալսարանի գիտակրթական ու հասարակական-քաղաքական կյանքին: Ցանկացած հանձնարարություն կատարել է մեծագույն պատասխանատվությամբ, սիրով ու նվիրումով, գործընկերների ու ուսանողների, անգամ մտերիմների հանդեպ եղել է խստապահանջ, բժախնդիր և նման վերաբերմունքի հիմքում ընկած է եղել ոչ թե անձնական, այլ ընդհանուրի շահը:

Իր գիտական, մանկավարժական, հասարակական-քաղաքական արդյունավետ գործունեության համար պրոֆ. Միրզոյանը արժանացել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրի և ԵՊՀ ոսկե հուշամեդալների:

**ԵՊՀ փիլիսոփայության ֆակուլտետ  
«Բանբեր Երևանի համալսարանի» խմբագրություն**